

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

356
N1539

Յ Ո Ւ Ր Ի Դ Ա Ն Ց Ի Գ Ե Ր

1928 N 896

ԹԵ ՎԱՆՅԱՆ ԻՆՋՈՒ ԴԱՐՁԱՎ ՈՂԱՋՈՒ

Փոխադր. ԽՆԿՈ ԱՊԵՐ

ՆԿԱՐՆԵՐ Ս. ԻՎԱՆՈՎԻ.



ВНЕШНЯЯ
ИНСТРУКЦИЯ
ПО ПОЛЕТУ
Академия Наук
СССР



391.71Ը
Դ-18

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1928.



Վանյան
 ուզեց նստի այերուպլան.
 Թռչի, տեսնի աշխարհում
 ինչ տեղ ինչ ազգ և ապրում.
 Վորտեղ գտնի խեղճ ույաղ՝
 ընչազուրկ պրոլետարիատ,
 ծանոթանա նրա հետ,
 Թռչի, ելի տուն գա յետ:
 Այ, ինչ հաշվով, այ ինչու՝


վճռեց լինել ոդաչու:
 Ինչպես պետք եր, ամեն որ,
 ուսումնասիրեց նա մոտոու,
 ոդանավի թևերը,
 ղեկը, պրոպելերը,
 վեր գնալը,
 ցած գալը,
 ամեն ինչը՝ մաս առ մաս.
 Յեվ չթողեց բան պակաս:

ՎԱՆՅԱՆ Դ-18

Ու նստեց նա
 նոր մեքենա.

բենզին առավ ամանով.
 գոչեց ուրախ, զիլ ձայնով.
 «բոլորիդ առայժմս ցը...»
 վզոցն եկավ վերիցը:
 Քանի վեր, վեր են Վանյան,
 ենքան գետնին ամեն բան՝
 տներ, մարդիկ մանրացան,
 կատու, շուն, հավ չքացան:
 Տեղ-տեղ ճամփա, դաշտ կանաչ
 լայն փռվում են իր առաջ:
 Ոդանավը շատ արագ
 կտրեց անցավ չորս նահանգ:
 Թըռ, թռչում է են Վանյան
 Յերկրե-յերկիր, ծով ովկյան
 Յեվ անծանոթ, և անտես:

30 MAY 2011



Յեվ վերջապես, յերբ մի որ
 կանգնեցրեց նա մոտոու,

ինքը կամաց
 իջավ ցած:

ԵՄԵՂՈՒՄԵՆ
 ԻՆՏԵՐՆԱ
 1991-08-28



Մարերի մեջ մի հովիտ,
 անտառները մեծ ու խիտ:
 Ողանավից թռավ դուրս,
 մարդկանց ասավ՝ բարիլուս,
 Խնչ յերկիր ե, ասեք, սպ,

ողանավով ուր հասա:
 Ասացին նրան՝
 սա յե Ավստրալիան:
 Իսկ մենք՝ ցեղը տեղական,
 բնիկ, վոչ թե գաղթական:



Վճնց եք ապրում դուք այստեղ:
 — Շատ նեղ.
 Կպած իրար, պոչ-պոչի,
 բռնած ճամփեն են քոչի,
 Թափառում ենք դափ-դատարկ

անձրևի տակ, քամու տակ.
 Թե վորս գտանք-ապրած ենք,
 Թե չգտանք—կորած ենք:
 Մոծակ, պիծակ
 մեզ կծում են սանձարձակ.



սուր քարերը՝ մեր կացին,
մեր դանակը՝ սուր խեցին:
Վանյան թե՛ վայրենիք,
մարդուն եսպես հայրենիք,
խիտ անտառը չորս բոլոր,
բա շունենամք մի կտոր
վառելու փայտ...

ամոթ ե այդ:
Համեցեք ձեզ մի կացին:
Թող փայտ կտրի Ավստրալացին:
Վանյան ելի նույն որը
լարեց սարքի մոտոռը.
պրոպելլերը վժվժաց,
ողանավր վեր գնաց
դեպի նոր նոր յերկրներ,




— Դու ընկել ես Ալյասկա,
ի՞նչ կա...
Մեզ կանչում են Եսկիմոս.
ովկյանոսում միշտ ձկնորս.
նորի կարոտ, մի հարցասեր
ժողովուրդ.



60699-67

կապույտ ծովեր, ովկյաններ,
դեպի հյուսիս իր ճամփան՝
սարքի, կարքի ամեն բան,
Վանյա, տեղդ պի՛նդ նստի,
կարիք չկա հանգստի:
Թռավ սար ձոր անապատ.
տեսավ ափեր ձյունապատ.
շառաչյունը հողմերի,
բևեռային կողմերի
գեղեցկությունն անսահման,
գովելու բան, անպայման.
Յե՛վ ովկյանը սառուցյալ,
Յե՛վ սառուցներ ծալե ծալ:
Իջավ Վանյան, ասում ե.
— Ես ի՞նչ հող ե,
ես հողումը ի՞նչ ազգ կա.
խկույն Վանյան
լսում ե.




Ամբողջ տարին եստեղ ձյուն մեր շունը գանձ ե, գանձ:
ե, այստեղ ցուրտ, Գրտինք ենք թափում,
իսկ կես տարին միշտ լինում փոկեր, մորժեր խփում.
ե խավար, մութ. կառուցում ենք սառցից տնակ,
եսպես կյանքից ի՞նչ ոգուտ. չենք հարցնում ել ցուրտ ու տաք:
Վանյան թե՛ Եղպես, դրսում.
միթե... շատ ենք մրսում:
բա ի՞նչպես եք ապրում դուք. Վանյան թե՛
— Մի կերպ. վորսում ենք ձուկ այս խուլ անկյունում,
տեսակ, տեսակ, վոր ձեր կյանքն այդ ե,
սառուցների տակ: մի լավ բան տամ ձեզ,
Շուն ենք լծում անսանձ. վոր ձեզ անհայտ ե:



Այ ձեզ ռադիո ապարատ.
 սրանում ամեն մի մարդ
 կսի պարզ, փորոշ, անպատճառ,
 լուր, գրույց, խոսք, ճառ,
 յե՛վ յերգ, և նվագ... կզվարճանաք..
 — Շնորհակալութի՛նն...

Եսպես լավութի՛նն:
 Մի յերկու որ հյուր մնացեք,
 ձկան փորսի համեցեք,
 մեկ-միասին
 եսկիմոսներն ասին:

Պատասխանեց Վանյան.
 — Ինձ համար հաճելի բան
 բայց յեղեքներող, չեմ կարող
 ինձ պետք և շուտով թռչել:
 Սկսեց պրոպելլերը շրջել.
 պրոպելլերը վժվժաց,
 ողանավը վեր գնաց:
 Նա թռչում և այլ կողմեր,
 անապատներ ու լեռներ,
 յեզավ հինգ թե վեց ժամում
 անտառների աշխարհում.



արեգակը՝ վառ, անուշ,
 հալածել և մեզ-մշուշ:
 Վանյան իջնում և գետին,
 աչք ածելով իր շորս զին՝
 խոսում և զի՛լ՝ բարձրաձայն,
 ինչե՛ր կան...

այ քեզ յերկիր
 հետաքրքիր...
 սրա անունն ինձ ո՛վ կտաս:
 Ասին՝ «Կանադա»,
 Հյուսիսային Ամերիկա,
 ի՛նչ եք ուզում, ասե՛ք ի՛նչ կա:



—Ախ, վոչ, ասեց Վանյան,—յես են սուտ ե, սուտ, վոչ թե դորդ' հենց ենպես:
 —Ե, ասում են, յեթե դուք հենց ենպես տեսներու յեք յեկել մեզ, ու չեք ուզում մեզ վաասել, պետք ե ասել' համեցեք մեր վրանը' ինչպես ձեր տանը:
 Շատ ուրախ ենք ձեր գալուն. մենք ել ցեղ ենք մեծանուն, ժառանգ ենք մեծ ազգի' հնդիկ Աթաբասկի:

վոր ասում են' կարմրամորթ: կարմիր աղյուսի նման, բայց թե ուր ե եղպես բան:
 Չե, մեր ցեղին պիտի ասել մուգ դեղին: Վանյան տեսավ տղամարդիկ' մեծահասակ, մի մի մարտիկ, ու հարց տվեց' ինչպես կապ-րեք:
 Նրան ասին. ախ, չգիտեք' սպիտակները վոնց են նեղում մեզ մեր ծնված բնիկ տեղում:



Դարձել են մեր գլխի տերը, խլում են մեր անտառները— մեզ հարազատ ու հայրենի, անվանելով մեզ վայրենի:
 Մենք ապրում ենք միշտ ել դրսում,

ու ինչ ասեք, վոր չենք վոր-սում. պախրա, բիզոն ու զանազան մանր ու խոշոր վայրի գազան: Ծույլ չենք, թույլ չենք.

բայց մեր ուր մարդ չի քաշի.
 վրաններս՝ մաշված կաշի.
 բնիկ յերկրում շատ խեղճ
 մարդիկ,
 հագածներս ինչ — կարկտած
 վարտիկ.
 չարչարվում ենք խեղճ ու մո-

լոր,
 մերկ ու սոված տարին բոլոր:
 Բայց նման չենք մենք աղ-
 յուսի,
 եղպես պոչով սուտ չեն ասի:
 Մեզ հարցնես՝ սիրուն ցեղ ենք,
 դե դ՛ու առա՛ մենք տգեղ ենք:
 Վանյան տեսավ ճիշտ վոր
 քաջ են,
 աշխուժ տեսքով, շատ առողջ
 են,
 մանուկները ժիր ու բանուկ,
 ինքն ել վերցրեց մի մի գրքույկ
 ընծա տվեց մանուկներին:



Ելի կրկին
 դեկը ձեռքին
 ողանավում
 սավառնում ե լայն յերկնքում
 ու հաշվում ե մտքի միջին՝
 ինչպես հասնի Չինումաչին:
 Բարեկամս ե նա չիների,
 ըշտապում ե, չի համբերի.
 ուղղությունը դեպի հարավ,
 դեկը սեղմեց, հեռուն թռավ:
 Գնաց իջավ Չինումաչին
 մեծ Շանհայի իսկը միջին:
 Նա ասում ե՝
 հատուկ, հատուկ
 ընդունեցեք
 չին ընկերներ
 շանհայցիներ,
 պեկինցիներ,
 բոլորդ դուք
 հարգանք, պատիվ...



Քաղաքացիք բազմաթիվ
 ուրախ, ուրախ վազելով,
 ողանավը գննելով,
 Վանյային շատ հարգեցին,
 ու մի գավաթ թեյի վրա
 Չինաստանի չարն ու բարին
 պատմեցին:
 Չին ընկեր Լի-Տյան-Չին
 այ ինչ ասավ առանձին.
 — Ամեն մի պատառ հող
 չենք անում ձեռնաթող,
 ցանում ենք խնամքով,
 վոր սերմն աճի,
 մի չնչին խոտն անգամ
 կանաչի:

Ժողովուրդը աշխատող ե ան-
 սահման,
 յերեք անգամ բերք ե ժողո-
 վում տարեկան,
 մեղնում ամեն մի արհեստ
 գեղարվեստ ե, գեղարվեստ.
 շնորհալի վարպետներ,
 վարպետներ — գեղագետներ.
 դարբին, դերձակ, կոշկակար,
 ատաղձագործ, ներկարար,
 ջուլհակ, բրուտ, նախշ հանող,
 փորագրող, նկարող,
 մեկը մեկից վորակյալ.
 մեր թղթին վոր թուղթ չիգալ:



Բա վոսկրյա մանր իրերը.
 գարմացել են ոտար հյուրերը:
 Բա շերամը-ապրշում—
 վիր տեսնողը չի ապշում:

Գիտե՞ք ինչ է՝
 բրինձ ու թեյ, չեսուշա.
 ել վիրը...
 հախճապակին—ֆարֆորը:

Ես ամենը գրգռել եմ ախորժակ-
 ոտարները սաստիկ ազան, աչքածակ,
 ել ինգիլիզ, ել ֆրանցուզ, ել յանկի,
 փողի զոռով, մի հանգի,
 ներս են խուժել Չինաստան,
 ինչ է՝ նրան թալան տան
 ափաշկարա—ցերեկով:
 Կվառենք նրանց
 հեղափոխության կրակով:
 Տպեցինք զրքեր,
 տվինք ժողովրդին,
 փոխեցինք մտքեր:
 Վանյան ասավ—
 Լավ է, լավ.

Կեցցե Շանհայը հեղափոխական,
 թող ազատի ժողովուրդը չինական:
 Ու գնաց տեսավ—
 վո՞նց է բուսնում թեյի տերեր,
 վո՞նց է բերք հավաքելու ձևը.
 վո՞նց է շերամ մշակվում.
 վերածնված աշխարհում
 վո՞նց է մարդվում գենքի տակ
 հեղափոխական մեծ բանակ:
 Ել չիմացավ ինչն ինչ է.
 րնծայեցին մի թուփ չեսուշա
 շապկի համար:
 Վանյան նորից յերկնակամար.
 այնտեղից մի ժամ շարունակ
 շարժում եր թաշկինակ.



կանչում. «Շնորհակալ եմ,
 շնորհակալ,
 բարեկամներ հյուրընկալ»,
 մինչև վոր
 աչքից ծածկվեց
 ինչպես թռչուն թևավոր:



Այսպես Վանյան
 նստած այերուպլան,
 ենպես թեթև, թուռցիկ,
 յեղավ չորս գունավոր ազգի
 մոտ:

Ու մի գեղեցիկ
 ամռան առավոտ
 յեկավ տուն—
 «Կեցցե՛ ողաշուն»:



«Ազգային գրադարան»
 NL0391147

3119

ԳԻՐՆ Է 50 ԿՈՂ



ԼՈՒԻՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԿԻՑ ԳՈՐԾՈՂ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՄԲ № 26

ԳՐԱՌԵԹ. № 629 Բ.

ՊԵՏՏՐԱՏ № 730

ՎԻՍ. ՀԱՅՄՈՆԻԳՐԱՅԻ 2-րդ ՏՄԱՐԱՆ

ՏԻՐԱԺ 5000.

ՊԱՏՎԵՐ № 3562